04402155
Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզ
Ջանֆիդայի գյուղապետարան

04402155
Республика Армения
Армавирский марз
Джанфидинский
Муниципалитет

Հասցե՝ գ. Ջանֆիդա

Адрес. с.Джанфида

Թիվ 63 03.04.2018 թ.

Номер 63 03.04.2018 г

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏ՝ ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի ղեկավարի ընդունված որոշումները և արձակված կարգադրությունները:

Առդիր 4 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Ղորղանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջանֆիդա, (093) 848408, janfida.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՄԱՐՏԻ 2018 թվականի N 19

ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 777-781-րդ հոդվածներով, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1 . 2018 թ. մարտի 1-ից Անուշավան Արամի Ղազարյանի հետ կնքել կոմունալ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր 1/մեկ/ տարի ժամկետով՝ համաձայն հավելվածի:

2 . Պայմանագրի գինը սահմանել 600000 /վեց հարյուր հազ./ ՀՀ դրամ:

3 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԿԱՄՍԱՐ ՂՈՐՂԱՆՅԱՆ**

2018 թ. մարտի 01
գ.Ջանֆիդա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԶԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2018 թվականի մարտի 12 թիվ 20-Ա

ՈՐՈՇՈՒՄ
ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Արմավիրի մարզի Զանֆիդա համայնքի բնակիչ Բաբկեն Հակոբի Գրիգորյանի դիմումը Արմավիրի մարզի Զանֆիդա համայնքի 19 փողոց թիվ 29 հասցեում տնամերձ հողամասի վրա գտնվող ինքնակամ շինության օրինականացման վերաբերյալ:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2006 թ. թիվ 912-Ն որոշումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը վտանգ չի ներկայացնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել օրինական՝ քաղաքացի Բաբկեն Գրիգորյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի գյուղ Զանֆիդա 19 փողոց 29 հասցեում գտնվող տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տուն 145.2 քառ/մ. կառուց. 1992 թ., աստիճաններ 12.0 քառ/մ. կառ. 1992 թ., բնակելի տուն 50.2 քառ/մ. կառ. 1992 թ., անասնաշենք 38.0 քառ/մ. կառ. 1992 թ., ինքնակամ օժանդակ շինությունը ծածկ 36.5 քառ/մ. կառ. 2005 թ., ծածկ 29.8 քառ/մ. կառ. 2005 թվականին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Կ. Ղորղանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԶԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

2018 թվականի մարտի 19 թիվ 21-Ա որոշում

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2007 թվականի հունիսի 07-ի «Համայնքային նշանակության փողոցների հասցեավորման մասին» թիվ 6 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զանֆիդա համայնքի բնակիչ՝ Բենիամին Սերյոժայի Մարգարյանին պատկանող բնակելի տանը տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զանֆիդա գյուղական համայնքի 14 փողոց թիվ 7 տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորման ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Կ. Ղորղանյան
2018 թվականի մարտի 19

գ. Զանֆիդա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԶԱՆՖԻԴԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

2018 թվականի մարտի 29 թիվ 22-Ա որոշում

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2007 թվականի հունիսի 07-ի «Համայնքային նշանակության փողոցների հասցեավորման մասին» թիվ 6 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զանֆիդա համայնքի բնակիչ՝ Դոնարա Այվազյանին պատկանող բնակելի տանը տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զանֆիդա գյուղական համայնքի 1 փողոց թիվ 14 բնակելի տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորման ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Կ. Ղորղանյան
2018 թվականի մարտի 29

գ. Զանֆիդա